Grant Thornton
An instinct for growth™

Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարանի ռեկտոր
Արմեն Դարբինյանին

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of
Armenia
T + 374 10 50 09 64/61

2021թ. սեպտեմբերի 30

Հարգելի պարոն Դարբինյան,

Համաձայն «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի և «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի միջև 2018թ. մարտի 12-ին կնքված թիվ AT-AU-018-18 պայմանագրի՝ մենք աուդիտի ենք ենթարկել Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում ֆինանսավորվող «Հայ-Ռուսական համալսարանի «Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման և 3-րդ սերնդի սեքվենավորման» կրթական և գիտական գերազանցության կենտրոն» ծրագրի կից ներկայացված դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները՝ 2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ, ինչպես նաև 2019թ. օգոստոսի 1-ից մինչև 2021թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար: Աուդիտի ընթացքում չեն հայտնաբերել որևէ էական թերություններ, որոնց վրա կցանկանայինք հրավիրել Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարանի (ՌՀՀ) ղեկավարության ուշադրությանը: Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ համոզվելու համար, որ դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական սխալներ և, հետևաբար, այն չէր նախատեսվել թերություններ բացահայտելու համար:

Աուդիտի հիմնական նպատակը դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելն է: Այս նպատակին հասնելու համար, իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, մենք ուսումնասիրել ենք ՌՀՀ ներքին վերահսկողության համակարգը՝ որոշելու, թե որքանով կարող ենք հիմնվել այդ համակարգի վրա՝ աուդիտորական ընթացակարգերը պլանավորելու նպատակով: Այնուամենայնիվ, այս ուսումնասիրությունները չէին կարող բացահայտել բոլոր այն թերությունները, որոնք կարող էին բացահայտվել ՌՀՀ ներքին վերահսկողության համակարգի հատուկ ստուգումների իրականացման ժամանակ:

Սույն նամակը պատրաստվել է ՌՀՀ ղեկավարության համար և նախատեսված չէ այլ նպատակների համար:

Grant Thornton Armenia is a member firm of Grant Thornton International Ltd (GTIL). GTIL and the member firms are not a worldwide partnership. GTIL and each member firm is a separate legal entity. Services are delivered by the member firms. GTIL and its member firms are not agents of, and do not obligate, one another and are not liable for one another's acts or omissions.

Grant Thornton
An instinct for growth™

Օգտվելով առիթից՝ շնորհակալություն ենք հայտնում ՌՀՀ աշխատակազմին՝ աուդիտի ընթացքում ցուցաբերած համագործակցության և օժանդակության համար:

Հարգանքներով՝

Արմեն Հովհաննիսյան — Էմիլ Վասիլյան

Տնօրեն — Առաջադրանքի պատասխանատու